



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՕՐԵՆԸ ՔԱՌՆԹԻ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 12 Դեկտեմբերին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Օրենք Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH

On Sunday, December 12th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Երեքշաբթի, 7
Դեկտեմբերի կեսօրին,
Թեմիս բարեխնամ
Առաջնորդ Բարձր. Ս.
Մուշեղ Արք. Մարտիրոսեան
ընդունեց այցելութիւնը
Հայաստանի եւ Արցախի
Ազգային Ժողովներու
անդամներու, որոնք այս
օրերուն Լոս անձելլոս կը
գտնուին Հ.Յ.Դ.
120ամեակին նուիրուած
հանդիսութեանց ու

գիտաժողովներուն առիթով: Այցելուներն էին Հայաստանի Ազգ. ժողովի անդամ Լիլիթ Գալստեան, Արցախի Ազգ. ժողովի անդամ Արմէն Սարգսեան, Յ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ հայ մամուլի երախտաւոր ծառայողներէն՝ «Դրօշակ»ի նախկին խմբագիր ու Յունաստանի «Ազատ Օր» օրաթերթի աշխատակից Նազարէթ Պերպերեան:

Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցած հանդիպումին ներկայ եղան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահէ Եագուպեան, Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներ՝ Գերայ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ անդամներ՝ Տեարք Ծորճ Զօրպաճեան, Թորոս Զէչէճեան եւ Խաչիկ Երեցեան: Հրաւիրուած էին նաեւ Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տոքթ. Վիգէն Յովսէփեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Լիբանանի նախկին երեսփոխան եւ նախարար Տիար Շահէ Պարսումեան, եւ Իրանի խորհրդարանի անդամ Տիար Գեորգ Վարդանեան սակայն բանաւոր ու յարգելի պատճառներով չկրցան ներկայ ըլլալ հանդիպումին:

Նկատի ունենալով, որ հանդիպումը կը զուգարկապէր Հայաստանի մէջ երկրաշարժի տարեդարձին, առաջին հերթին, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն» մատրան մէջ, Առաջնորդ Սրբազանին գլխաւորութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որմէ ետք, հիւրերը բարձրացան դահլիճ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւրերը եւ գնահատանքով արտայայտուեցաւ հայ պետական անձնաւորութիւններու հայրենասուեր ու ժողովրդանուեր ծառայութիւններուն մասին: Ան նաեւ շնորհաւորեց զանոնք՝ Յ.Յ.Դ.աշակցութեան 120ամեակին առիթով եւ վեր առաւ անոնց մասնակցութիւնը յիշեալ հանդիսութիւններուն ու ձեռնարկներուն: Առաջնորդ Սրբազանը նաեւ լուսաբանութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող եկեղեցաշէն ու սերնդակերտ աշխատանքներուն մասին:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Տեարք Վահէ Եագուպեան, Տիկին Ռիմա Պօղոսեան եւ Տիար Աւետիք Իզմիրլեան: Իրենց կարգին, շնորհակալութեան խօսք արտասանեցին հիւր պատգամաւորները՝ Լիլիթ Գալստեան եւ Արմէն Սարգսեան, վեր առնելով պատասխանատուութեան ու բարձր գիտակցութեամբ ծառայելու, Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ու փոխադարձ զօրակցութեան, ինչպէս նաեւ Արցախեան Պայքարէն ներշնչուած՝ մեր իրաւունքները աննահանջ կերպով շարունակելու եւ հայրենաշինութեան նուիրուելու հրամայականները:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն, որոնք այնուհետեւ ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի տարբեր բաժանմունքներուն: Առաջնորդ Սրբազանը բոլոր ներկաները հիւրասիրեց ճաշով:

PRELATE WELCOMES NATIONAL ASSEMBLY MEMBERS OF ARMENIA AND ARTSAKH



On Tuesday, December 7th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Ms. Lilit Galstyan, member of the National Assembly of Armenia, and Mr. Armen Sargsyan, member of the National Assembly of Artsakh, who are in Los Angeles to participate in ARF 120th anniversary celebrations.

The guests were accompanied by ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian and Mr. Nazaret Berberian, former editor of the "Troshag" newspaper and contributor to the "Azad Or" newspaper

Also participating in the meeting were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Central Executive member Mr. Vahe Yacoubian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mr. George Chorbajian, Mr. Toros Kejejian, and Mr. Khatchig Yeretjian.

ARF Bureau member Dr. Viken Hovsepian, former Lebanese Parliamentarian Mr. Shahe Barsoumian, and member of Iran's Parliament Mr. Gevorg Vartanian were also invited but were not able to attend.

Given that the visit coincided with the 22nd anniversary of the earthquake in Armenia, guests first headed to the "St. Dertad and St. Ashkhen" Chapel for a requiem service in memory of the victims, after which the meeting took place in the reception room.

In his welcoming remarks, the Prelate commended their service to the advancement of our nation and their participation and contributions in the 120th anniversary celebrations of the ARF. He also conveyed to them information about the endeavors and mission of the Prelacy.

Remarks were also delivered by Mr. Yacoubian, Mrs. Boghossian, and Mr. Izmirlian.

Mrs. Galstyan and Mr. Sargsyan expressed their thanks for the warm welcome and meeting. In their remarks, they both spoke of the importance of collaboration between the Diaspora and Armenia and Artsakh, and of continuing our struggle for our rights and for the prosperity of our nation.

The Prelate presented the guests with mementos, and after a brief tour of Prelacy departments, hosted them to lunch.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Զ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 7 Դեկտեմբերի երեկոյեան ընդունեց այցելութիւնը Զ.Մ.Ը.Մ.Ի Նորընտիր Շրջանային Վարչութեան, գլխաւորութեամբ ատենապետին՝ Տիար Գառնիկ Աբրահամեանի: Հանդիպումին ներկայ եղան Ազգային Վարչութեան

ատենապետը՝ Տիկին Ռիմա Պօղոսեան եւ անդամներ՝ Տեարք Ճորճ Զօրպաճեան, Թորոս Զէչէճեան, Խաչիկ Երեցեան եւ Կարէն Բենիասեանս:

Կազմերու փոխադարձ ծանօթացումէն ետք, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետուհին արտասանեցին ողջոյնի խօսքեր: Անոնք շնորհաւորեցին ընտրեալ ծառայողները եւ վեր առին Զ.Մ.Ը.Մ.Ի սերնդակերտ ու պատանիներն ու երիտասարդները առողջ մթնոլորտի մէջ համախմբելու այս միութեան յատկանիշները:

Զ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչները հակիրճ տեղեկութիւններ տուին Զ.Մ.Ը.Մ.Ի շրջանային ժողովին ու անոր յաջորդած կազմակերպական աշխատանքներուն, ապա նաեւ յառաջիկայ ծրագիրներուն մասին: Անոնք նշեցին, թէ վարչութիւնը կը քննարկէ տարբեր մարզերուն մէջ յաւելեալ բարելաւում ձեռք բերելու եւ երիտասարդութիւնը աւելի եւս ներգրաւելու միջոցները: Յատուկ կարեւորութեամբ վեր առնուեցաւ Ազգ. Առաջնորդարանին հետ Զ.Մ.Ը.Մ.Ի դաստիարակչական ծրագիրները՝ սկստուական «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին գծով աշխատանքները աւելի եւս ընդարձակելու կարելիութիւնները:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Զ.Մ.Ը.Մ.Ի ու անոր անձնուէր ծառայողներուն գործունեութիւնը եւ յաջողութիւն մաղթեց Նոր կազմին, իր յանձն առած պատասխանատուութիւններուն կենսագործման մէջ: Ան նաեւ յուշանուէրներ յանձնեց հիւր վարչականներուն:

HOMENETMEN NEW REGIONAL EXECUTIVE VISITS THE PRELACY

On Tuesday, December 7th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy members of the Homenetmen new Regional Executive, headed by Chairman Mr. Garnik Abrahamian. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mr. George

Chorbajian, Mr. Toros Kejejian, Mr. Khatchig Yeretzian, and Mr. Kahren Beniasians participated in the meeting.



Following the introductions, the Prelate and Mrs. Boghossian welcomed the guests, congratulating them on their election and commending the mission of Homenetmen.

The Homenetmen representatives conveyed information about their upcoming endeavors and projects they are planning, noting that special attention

is being given to the Navasartian Games, to having the youth more involved in community life, and to expanding the St. Mesrob Mashdots program which is a collaborative effort between the Prelacy and Homenetmen.

The Prelate again commended the dedication of the members to fulfilling the mission of Homenetmen, and wished them success in their future endeavors. The meeting concluded with the presentation of mementos by the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Յ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Կիրակի, երեկոյեան ժամը 6-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 120-ամեակի տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Կլենտոյլի Հայ Սքուլի հանդիսասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

Սրբազան Հօր պիտի ընկերանան Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանն ու Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգային Վարչութեան անդամներ:

PRELATE TO ATTEND ARF DAY CELEBRATION

On Sunday, December 12th, a community-wide celebration of the 120th anniversary of the ARF will be held at the auditorium of Glendale High School.

The Prelate will attend, accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

Executive Council members will also be in attendance.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԳԵՈՐԳ ԶԱՃԵԱՆԻ ՄԵՆԱՅԱՄԵՐԳԻՆ

Կազմակերպութեամբ պատկերասփիւռի «Յորիգոն» կայանի տնօրէնութեան, Ուրբաթ, 10 Դեկտեմբերի երեկոյեան, մենահամերգ մը տեղի պիտի ունենայ Զոլիվուտի Barnsdall Park-ի հանդիսասարահին մէջ:

Ելոյթ պիտի ունենայ հայ դասական եւ Կոմիտասեան երգերու մեկնաբան Գեորգ Զաճեան:

Ձեռնարկին իր մասնակցութիւնը պիտի բերէ Ազգային Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդական երգչախումբը, խմբավարութեամբ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ համերգին:

PRELATE TO ATTEND KEVORK HADJIAN CONCERT

Horizon Television has organized a concert featuring Kevork Hadjian to take place on Friday, December 10th, at Barnsdall Park Gallery Theatre.

The Prelacy "Lousavorich" Youth Choir, led by Very Rev. Fr. Barthev Gulumian, will participate in the concert.

The Prelate will attend.

ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՁԵՌՆԱՐԿ

Չորեքշաբթի, 8 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, կազմակերպութեամբ Դաթեան-Մարիամեան Կրթական Զաստատութեան, տեղի ունեցաւ Զաստատութեան տարեկան ճաշկերոյթը, «Անուշ» ճաշասարահին մէջ, Կլենտէյլ:

Սոյն ձեռնարկին կը գնահատուին ու կը մեծարուին կրթական կազմի վաստակաշատ նուիրեալներ, ինչպէս նաեւ գաղութիս մէջ բեղուն գործունեութիւն ունեցող հաստատութիւններ, սոյն Զաստատութեան կրթական գործը նիւթապէս ու բարոյապէս հովանաւորող անհատներ ու կազմակերպութիւններ:

Այս տարի, Տիկին Թինա Մկրտչեան-Յարութիւնեան, իբրեւ «Տարուան Գործունեայ Կինը», յատուկ գնահատանքի արժանացաւ, իր հանրային բազմամեայ վաստակին համար: Գնահատանքի արժանացաւ նաեւ Կլենտէյլի "Thomas Jefferson" նախակրթարանը, իբրեւ «Տարուան Կրթական Զաստատութիւնը»:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքը: Սրբազան Զոր կ'ընկերանար

Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան: Ներկայ էին նաեւ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանն ու Ազգային Վարչութեան անդամ՝ Տիար Կարօ Էշկիեան:

DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION APPRECIATION NIGHT

The annual banquet and appreciation night of the Davidian & Mariamian Educational Foundation took place on Wednesday, December 6th, at Anoush Restaurant in Glendale.

Each year, educators and community supporters are honored for their contributions to the field of education and to the Foundation.

This year's honorees were Mrs. Tina Megerdichian-Harutunian as "Woman of the Year" and Thomas Jefferson Elementary School as "Educational Institution of the Year".

The Prelate attended and conveyed his blessings and message. He was accompanied by Rev. Fr. Ardak Demirjian.

H.E. Archbishop Yeprem Tabakian and Executive Council member Mr. Garo Eshgjan were also in attendance.
